մէջ կը համապատասխանէ Ա. գլխին՝ Թ. գլխուն, որուն մէջ կը պատմուի Մարի Աբաս կատինայի զարմանալի պատմութիւնը։

Մովսէս Խորենացի՝ Ափրիկանոսի անձն եւ սեբէոսի գրուածներէն կը ճանչնայ։ Եղեղեցեան պատմութեան առաջին գրքին մէջ, որմէ քիչ մ'եռաբը պիտի տեսնենք թէ ինչ ընդարձակ փոխառութիւններ կ'ընէ Խորենացի, Ափրիկանոսի անունն երեք անգամ կը յիշատակուի, եւ իւր մէկ նամակն՝ որ ամբողջովին յառաջ բերուած է, երկայն գլուխ մը կը կազմէ (Ա. Է)։ քիչ մ'եռաբը (Զ. ԼԱ) իւր ժամանակագրութիւնը եւ հինգ գրքերու բաժնուած ըլլալը կը յիշատակուի։ Այս վերջին մանրամասնութիւնն Եւսեբիոսի ժամանակագրութեան[1] մէջ ալ կը գտնուի։ Բայց Յուլիոս Ափրիկանոսին գրքին համար, կրնանք ըսել թէ Մովսէս երբեք գործածած չէ[2]։ Իրեն համար բաւական էր գիտնալը թէ ինչպիսի հեղինակութիւն ունի այս անունը։

Յովսեպոս եւ Հիպպողիտոս յիշատակուած են իբր Ափրիկանոսի օգնական վկաներ։ Առաջինը՝ քանի մը յաջորդ գլուխներու համար, իրօք իբր աղբիւր պիտի գործածուի։ Կը խոստովանինք թէ երկրորդին համար՝ որուն անունը հոս շատ զարմանալի ձեւով[3] կը ներկայանայ, բան մը չենք կրնար ըսել։ Հիպպողիտոս թէպէտ ժամանակագրութիւն[4] մը կազմած էր, բայց կ'երեւայ թէ Արեւելք ծանօթ չէր։ Գուշակիր աւելի հակակա կ'երեւայ կարծելու թէ Դանիէլի[5] գրոց Մեկնութիւն վրայ է նեղիրը։ Կարճ ըսենք, որոշ բան մը չենք գիտեր այս մասին։

Հայոց Պատմութիւն Բ. գրոց Ժ[որդ] գլխուն վրայ մեր գիտողութեանց վերջը չտուած, կ'ուզենք մանական կէտ մըն ալ յիշատակել, որ սակայն մեր խուզարկութեանց համար շատ կարեւոր է։ Մովսէսի բնագրին մէջ կը կարդանք. "Եդեսիա՝ որ է Ուռհայ։" Այս վերջինս եգեսիայի ասորերէն (ܐܕܶܣܳܐ) անունն է, եւ՝ շատ մը հայ մատենագիրներ ըստ բաւականի յաճախ կը գործածեն։ Ի բաց առեալ յիշատակարան[1] մը տիզրոսը, զոր Մ. Խորենացի յառաջ կը բերէ, եւ Աբգարի պատմութեան երկու մեծ աղբիւրներէն մէկը կը կազմէ, երբեք այս երկու անուններն այսպէս իրարու մերձեցած գործածուիլը չենք յիշեր։ Այս յիշատակարանով պիտի զբաղինք այժմ։

(Շարունակելի։)

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՏԻՒՆ ՓԱՌՍՏԱՍ ԲԻԼԶՆԵՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Բ.

Փառատուի բանաքաղութիւնները Ե. դարի հայերէն գրուածքներից. — Ակնարկութիւններ Ե. դարի անցքերի վրայ. — Անտեղեկութիւն ժամանակագրութեան. — Հրաշքներ, առասպելութիւններ, միսիական տարր. — Հեղինակի ազգային ոգին. — Եզրակացութիւն։

(Շարունակութիւն ի թերէ։)

Բրդէն Նորայր Բիւզանդացին ցոյց է տուել,[2] որ Փ.ի հեղինակը՝ Ս. Ղեւոնդեանի ժամանակ ապաւէն ի՝ Ղեւոնդ մարդ

ում է լեզուի եւ բառերի մեծ նմանութիւն, որ մեզ թոյլ է տալիս եզրակացնել, թէ Փ.ի հեղինակն օգտուել է նոյնպէս Եւսեբիոսի Եկեղ. պատմութեան հայերէն թարգմանութիւնից։

Փ.ի հեղինակը խիստ յաճախ օգտուում է եւ Ս. Գրքից, թէ բառացի հատուածներ մէջ բերելով եւ թէ Ս. Գրքի խօսքերով իւր պատմութիւնը հիւսելով, ինչպէս արդէն նկատուած է ուրիշներից։ Երկու դէպքումն էլ Փ. օգտուում է Ս. Գրքի անպայման հայերէն թարգմանութիւնից։ Օրինակներն այնքան բազմաթիւ են եւ քաջածանօթ, որ հարկ չենք համարում երկարել այս մասին։ Նկատենք միայն, որ Դանիէլի մարգարէութիւնից մի ընդարձակ հատուած — "Ցիրուանոնս անցուցեր գու զայս ամենայն ընդ մեզ... որ փառաւորեալդ ես ի վերայ ամենայն տիւղերաց„ (Դանիէլ Գ, 27—45 = Փաւաս. Ե, գ.) — հեղինակը մէջ է բերում Հայոց ծամբէրէն ընթերցուածքի համաձայն, որ բուսական տարբերութիւններ ունի Ս. Գրքի ընթերցուածքից։ Ցիշենք նոյնպէս, որ համաձայն Հ. Գաթերճեանի վկայութեան՝ Փ.ի հեղինակն ընդարձակ չափով օգտուել է նաեւ Ս. Բարսղի պատարագամատոյցից հայերէն թարգմանութիւնից, եւ "կու տայ մեզի սա թարգմանութեան վրայ համառօտած պատկերմ, որն որ մեր հայ օրինակներուն հետ այնչափ համեմատ կ'ելլէ. այնպէս որ շատ անգամ կ'ուղղէ իսկ մեր հինգուսան օրինակները։„

Վերոյիշեալ բաղդատութիւններից տեսնում ենք, որ Փ.ի հեղինակը յայտնապէս օգտուել է — Ագաթանգեղոսից, Կորիւնից, Եւսեբիոսի Եկեղեցական պատմութիւնից, Ս. Գրքից, Ժամագրքից, Ս. Բարսղի պատարագամատոյցից, որոնք բոլորը գրուած կամ թարգմանուած են հայերէն լեզուով Ե. դարի առաջին կիսում եւ հասնում են մինչեւ Ե. դարի կիսավերջը (Կորիւն, Ագաթանգեղոս)։ Սորանից բնականապէս եզրակացնում ենք, որ Փաւստոսի պատմութիւնը կարող է երեսուն կամ քառասուն տարի յետոյ գրուած լինել։ Հաւանօրէն Ագաթանգեղոսի հայերէն խմբագրութիւնից ոչ շատ յետոյ, որի շարունակողն է համարուում։ Աւելի ուշ ժամանակի գրուածք չենք կարող համարել նրան, ի նկատի ունենալով լեզուն, որ ոսկեդէն շրջանին է պատկանում, եւ այն՝ որ նոյն դարի ուղղափառական թուականներին նրան յիշում է Փարպեցին, Փաւստոս Բուզանդացու գործ համարելով, ուրեմն ծանօթ չլինելով այս պատմութեան գրութեան դարաշրջանին։

Ոչ յիրաւի Փ.ի պատմութիւնը գրուած է մեր սուտ ժամանակագրիչներ՝ երեւում է նաեւ հեղինակի մի քանի՝ քաղարկուած ձեւով արած ակնարկութիւններից, որոնք յիշեցնում են Ե. դարի Հայոց դէպքերը, նոյն իսկ կրօնական հաւատամքներն ու պատերազմ։ Այս ակնարկութիւնները հեղինակը մէջ է բերում իբրեւ տեսիլ, գուշակութիւն, անէծք կամ օրհնութիւն. բայց ներկայ բանասիրութիւնը գիտի իսկական արժէքով դնահատել հին հեղինակների այս անմեղ սովորութիւնը։

Այսպէս՝ Ցուսիկին տեսիլքում գուշակուում է, որ նա ունենալու է արժանաւոր զաւակներ, որոնք պէտք է լուսաւորեն Հայոց աշխարհը, որոնց միջոցով Քրիստոս պիտի փառաւորուի շատ լեզուներով... նոքա անարժաններից Քրիստոսի համար տառապութեան եւ դահանձի նշաւակ պիտի լինին։ Ցեղոց պէտք է թագաւորէ ամենայն, անպիտան, բանսարկու, մոսիաք մարդկանց պատճառով, եւ քշերը պիտի մնան՝ որոնք հաստատեան հաւատում. (Գ. Ե. — Ակնարկութիւն գրերի գիւտի, Ս. Սահակի կրած նեղութիւնների եւ հաւատոտրացների վերայ)։ — Դանիել ծերունին Հայերին յանդիմանելով ասում է. "Արդ վասն այսչափ տաւութեանց ձերոց եւ պղծութեանց բարձցէ Տէր զլիագաւորութիւնդ ի ձէնջ, բարձցէ եւ զքահանայապետութիւնդ ի ձէնջ„ (Գ, ժգ. — Բացայայտ ակնարկութիւն Արշակունեաց բարձման եւ Ս. Գրիգորի ցեղից քահանայապետութեան գադարման վերայ)։ Ցեռոյ մնար նկարագրում է այն վիճակը, որի մէջ պիտի գտնուին Հայերը թագաւորութեան բարձումից յետոյ, երբ "իրանց փառքը կորցրած՝ օտար թշնամիների ձեռքը կը մատնուին եւ հպատակութեան լծին կ'ենթարկուին, որ երբէք նոցա վերայից չպիտի վերանայ„։ — Ներսէս Մեծը Արշակին անիծելիս՝ նոյնպէս օգտագործում եւ գուշակում է Արշակունեաց բարձումը — "բմնել ազգիդ Արշակունեաց գլեանն բաժակն. արքջիք, արքեսջիք եւ կործանեսջիք, եւ այլ մի եւս կանգնեսջիք„ (Գ. ժե)։ — Նոյն Հայրապետը Մուշեղ Մամիկոնեանին օրհնելիս՝ ասում է. "Տացէ քեզ գլաղթութեանն շնորհս զամենայն աւուրս կենաց քոց. ի ձեռն քո եւ ի ձեռն ազգի քո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչեւ յաւիտեան„ (Ե. ա), որ հասկանալի է դառնում երբ մտաբերենք Մամիկոնեանների կոտորած դերը առաջին կրօնական պատերազմի ժամանակ։ Թերեւս նոյն հանգամանքով հարկ լինի բացատրել եւ այն չափազանց գովեստը, որ հեղինակը տալիս է Մամիկոնեաններին ամէն մի յարմար դէպքում։

Փ.ի պատմութիւնը Գ. դարում յաւելեալ գրուած համարող բանասէրները գուցէ առարկեն, թէ վերոյիշեալ հայերէն աղբիւրներից օգտուել, վերոյիշեալ ակնարկութիւնները Ե. դարի վերայ ներմուծել է հայ թարգմանիչը[1] — Այսպիսի բացատրութիւն մենք ստիպուած կը լինենք տալ

[1] Երից մանկանց այս ընդարձակ օրհնութիւնն ամբողջապէս պակասում է այժմեան յունարէն օրինակներում։ (ըստ տպագր. Աստուածաշնչի ընկերութեան։)

[2] "Հանդ. ամս.„ 1889, Մարտ, եր. 42—43։ — Մենք հնաբաղդութիւն չունինք բաղդատելու Փ.ին՝ նաեւ սրբոց վարքերի եւ վկայաբանութիւնների հետ, որոնցից օգտուած պէտք է լինի հեղինակը, ինչպէս դիտել է Հ. Ց. Գաթերճեան։ (Անդ.։)

[1] Այստեղ խօսքը չէ կարող միայն Ս. Ներսէսի մասին լինել, քանի որ տեսիլքում շարունակ գործ է ածուած յոգնակի ձեւ — նոքա, ի նոցանէ, նոցա, որք։ Նոքաբարուին խօսքը պէտք է վերաբերի Ս. Ներսէսին եւ Ս. Սահակին միանգամայն, եւ աւելի վերջինին։

[2] Այսպէս եւ ենթադրում է Ն. Գարագաշեան Ցուսիկի տեսիլքի եւ Դանիէլի անէծքի մասին, (հին. պատմ. Գ, 28, 35)։ Հ. Բ. Սարգիսեան եւս ընդունում է, որ Փ.ի պատմութիւնը "հնկամաւ յաւելուածներու պատ-

digitised by A.R.A.R.@

յիշեալ երեւոյթներին՝ եթէ անվիճելի փաստեր ունենայինք, որ Փ.ի պատմութիւնը Դ. դարի գործ է։ Իսկ երբ այս կարծիքն, ինչպէս տեսանք, զուրկ է դրական հիմքերից՝ աւելորդ կը լինի վերոյիշեալ առարկութիւնը նոյն իսկ դնելը։ Բայց եթէ մի բոպէ համաձայնինք եւ այդ առարկութիւնն ընդունելու՝ դարձեալ ստիպուած կը լինինք ասել, որ Փ.ի պատմութիւնը յամենայն դէպս չէ կարող կոչուել թարգմանութիւն, այլ ազատ խմբագրո՞ւթիւն այն ենթադրուած յունարէն պատմութիւնից, որը խմբագրողն ըստ կամի համեմել է որշափ եւ որտեղ որ կամեցել է, սկսեալ առաջին գլխից, որ յիշում է Ե. դարի պատմական ազգութիւնները, մինչեւ վերջին գլուխը, ուր յիշում է Լուսաւորչի ճգնութիւնը։

Սակայն Փ.ի պատմութեան ներքին հանգամանքները թոյլ չեն տալիս մինչեւ անգամ ենթադրել Դ. դարի նախնական, թէկուզ համառօտ՝ յունարէն սկզբնագիր։ Եւ յիրաւի, այս պատմութիւնը շուտի այն յատկութիւնները, որոնք բնական, նոյն իսկ անհրաժեշտ պայման են ժամանակակից պատմութիւններին։ ընդհակառակն լի է այնպիսի թարերով, որոնք յատուկ են ուշ ժամանակ գրի առնուած պատմութիւններին։

Առաջին տեսակի յատկութիւնը, որ պահանջւում է ժամանակակից պատմութիւնից՝ ժամանակագրութիւն է, թէկուզ ոչ մանրամասն ու որոշ, բայց գոնէ ասոյդ։ Փ.ի պատմութեան մէջ չկայ ժամանակագրութիւն։ Դա պատմական անցքերը չէ առանդում ժամանակագրական յաջորդականութեամբ, անցքերը միմանց հետ կապելով իբրեւ պատճառ ու հետեւանք. այլ ամէն մի գլուխը նորա մէջ (խիստ տակաւ բացառութեամբ) առանձին առանձին էպիզոդներ են, որոնք մէկը միւսից կարող են յետ ու առաջ դրուել, կամ դուրս ձգուել՝ առանց որեւէ վնասի պատմութեան ամբողջութեան։ Նորա մէջ գլուխները սովորաբար սկսւում են "ապա„, "յետ այսորիկ„, "յայնմ ժամանակի„ անորոշ խօսքերով։ Այս յատկութիւնն արդէն ցոյց է տալիս, որ հեղինակը անցքերին ներկայ եւ ժամանակակից չէ եղել, որ նոցա մէջ եղած ներքին կապը գիտնար եւ գրէր. այլ ունեցել է կցկտուր տեղեկութիւններ պատմական անցքերի մասին, որոնք դասաւորել է այնպէս՝ ինչպէս որ իրան ուելի հաւանական է թուել։ Եթէ այս կցկտուր անցքերի ժողովածուի մէջ երբեմն հարեւանցի յիշուում են ժամանակագրական թուեր՝ դրքա չեն որոշում պատմական ճիշդ ժամանակ, այլ մանաւանդ մատնում են հեղինակի անտեղեկութիւնն այս մասում։[1] Մինչեւ մէջ կը բերենք մի քանի օրինակ, որոնք բաւական են ցոյց տալու Փ.ի ժամանակագրութեան այլանդակութիւնը, եւ համոզելու՝ որ ժամանակակից հեղինակը անկարող է այդպիսի խորին ազդեցութիւն ունենալ իւր պատմած անցքերի ժամանակի վերաբերութեամբ։

Արշակ Բ.ըստ Փ.ի, թագաւորած է Պարսից Ներսեհ աքբայի եւ Ցունաց Վաղէս կայսեր ժամանակ եւ նոցա երկուսէք համաձայնութեամբ ու դաշնադրութեամբ պատերազմից յետոյ, որի ժամանակ կայսրը կազմավաճառի կերպարանքով լրտեսեց Պարսից բանակը եւ գերի բռնեց Ներսեհի կանանց. (Գ. իա, Դ. ա։) Արդ Ներսէհ թագաւորած է 293—302 թուին, իսկ Վաղէս 364=378 թուին. ուրեմն նոքա ժամանակակից չլինելով՝ ոչ կռիւ կարող էին մղել միմանց հետ եւ ոչ հաշտութիւն անել։ Այս անտեղութիւնը վերացրնելու համար՝ հայ եւ օտարազգի պատմագիրներ կարծում են, որ Ներսեհ անունը սխալմամբ է գրուած, փոխանակ Շապուհի, կամ Ներսեհը ոչ թէ թագաւորն է, այլ Շապուհի որդին։ Սակայն երկու բացատրութիւններն էլ ընդունելի չեն։ Փ.ի մէջ Ներսեհ անունը կրկնուում է երեք անգամ (Գ., իա. Դ., ա, ծբ.), եւ երեք անգամն էլ նորան վերագրուում է միեւնոյն գործողութիւնը։ Իսկ որ նա Շապուհի որդին չէ՝ երեւում է սորանից, որ հեղինակը երեք անգամին էլ նրան կոչում է Ներսեհ աքբայ, եւ յիրաւի Ներսեհ աքբան էր (եւ ոչ Շապուհի որդին), որի հետ 296—297ին Հռոմայեցիք պատերազմ մղեցին Գալերիոսի զօրավարութեամբ, եւ Գաղերիոս լրտեսեց Ներսեհի բանակն ու գերի առաւ Ներսեհի կանանց ու որդոց։ Բայց թագուհիներ Ներսեհ աքբայի այս անկարելի եւ անբացատրելի միմամութիւնը Դ. դարի երկրորդ կէսի գործերի մէջ, եւ Արշակի թագաւորութեան ժամանակը, ըստ Փ.ի, որշափ Վաղէսի ժամանակով, եւ ենթադրելը նրան թագաւորած Վաղէսի թէկուզ առաջին տարում, 364ին։ Արդ տեսնենք, ինչ ժամանակագրական տեղեկութիւններ է տալիս պատմագիրը Արշակի մասին։

Արշակի օրով Ս. Ներսէս ձեռնադրուում է կաթողիկոս (Գ., գ. ուրեմն ամենամօտերը 364ին)։ եւ ուղարկուում է Վաղէսի մօտ պատգամաւոր (Դ. ե). ուղղափառութեան պատճառով ղրկուում է աքսոր, ուր մնում 9 տարի (Դ. զ)[1]. Վաղէսի մահից յետոյ արձակուում է եւ գալիս Հայաստան (Դ., ժգ.). այս ժամանակ տեղի է ունենում Տիրիթի եւ Գնէլի դէպքը, եւ Արշակ ամուսնանում է Փառանձեմի հետ, որ Սիւնեաց Անդոկ նախարարի դուստրն էր[2] (Դ., ժէ)։ Սորանից յետոյ տեղի ունեցաւ պատերազմ Ցունաց եւ Պարսից մէջ, որի ժամանակ Արշակ մենակ իւր զօրքով, առանց Պարսիկների օգնութեան, կոտորեց Ցունաց զօրքը

[1] Մեսրոպ Երեց (Սոփերք. Զ. 58) ունի "ապա ինն„, բայց ասոյդ ընթերցուածն է "ապա ինն„, ինչպէս ունի Փ.։

[2] Այս գեպքը Ներսէսի Ցունաստան գնալուց եւ աքսորուելուց առաջ չէր կարող լինել, քանի որ Հեղինակի վկայութեամբ՝ մինչեւ Հայաստանի թիւրագիրն գնալը Տիրիթ եւ Գնէլ պատանդ էին կայսեր մօտ, որ Ներսէսին աքսորելով՝ այս երկուսին արձակեց Հայաստան, Արշակի սիրոն մտրբելու համար (Դ., ի)։ Իսկ Գնէլի ապանութեան ժամանակ Ներսէս աքսորից վերադարձած էր եւ մինչորդում էր թագաւորին խնայել իւր եղբօրդուն։

[1] Ճառաւ՝ բոլորովին տարբեր երեւոյթ առած կը տեսնուի այժմ՝՝ Ագաթ., եր. 297։

[1] Ժամանակագրութեան այս բացակայութիւնը Փ.ի մէջ՝ ստիպել է Ա. Գրաբաչեանին՝ դիմելու խորենացու օգնութեան, որչափ եւ անհանդոյ է այս նորան, եւ Փ.ի հաղորդած պատմական տեղեկութիւնները ճշնել գեսանել խորենացու տուած ժամանակագրական չրջանակում։ Քննասամ. Գ., Ա։

digitised by A.R.A.R.@

Մծբինի մոտ, որին իբրեւ շնորհակալութիւն Շապուհ կամեցաւ Արշակին ամուսնացնել իւր դստեր հետ. իսկ Անգոկ, տեսնելով սորանից իւրդստեր Փառանձեմին հասնելիք արհամարհանքն ու վատնդը՝ խաբեական հնարներով Արշակին փախչել տուեց (Դ, ի.)։ Այս փախուստը Շապուհին կատաղեցնում է. բայց սա ութ տարի լուռ է մնում, որովհետեւ պատերազմը Յունաց հետ դեռ շարունակում էր. (Դ, իա) իսկ երբ պատերազմը վերջանում է Պարսիկների յաղթութեամբ՝ Շապուհ սկսում է Արշակի դէմ վրէժխնդրութեան պատերազմ, որ տեւում է աւելի քան երեսուն տարի, (Դ, ի, իա.) որից յետոյ Արշակ սպանուած է լինում գնալ Պարսկաստան եւ անձնատուր լինել Շապուհին, որ նրան Անյուշ բերդն է դնում (Դ, ծդ)։

Թողնելով այս պատմական անցքերի շարժառիթներն ըստ Փ.ի, որոնք աւելի վայելուչ են բոմանների, մանաւանդ հէքեաթների մէջ, թողնելով ուրիշ բազմաթիւ անտեղութիւնները՝ ուշադրութիւն դարձնենք միայն ժամանակագրութեան վրայ։ Ս. Ղեւոնդի վերագրած Հայաստան կոչուող էր տեղի ունենալ ոչ վաղ քան 378 թուին (Վաղէսի մահուան տարին)։ Թող հենց նոյն տարին Արշակ ամուսնանար Փառանձեմի հետ եւ Յունաց զօրքը կոտորեր Մծբինի մոտ։ Դորանից յետոյ ուրեմն անցնում են Շապուհի Յունաց հետ պատերազմների 8 տարին, ուրեմն, ամենայնուամբ հաշուելով, մինչեւ 386 թիւը։ Սորանից յետոյ Շապուհի եւ Արշակի մէջ սկսուած պատերազմները, որ երեսունից աւելի տարի տեւեցին՝ հասնում են ըստ Փ.ի մինչեւ 416—420 թուականները՝։ Այն ինչ ստոյգ յայտնի է, որ Շապուհ Բ. մեռաւ 379ի ամռան, իսկ Արշակ Անյուշ բերդը դրուեցաւ 368ին։

Ո՛ւրշակ էլ աշխատենք բռնի ձգձգելով Փ.ի այս ժամանակագրութիւնը համաձայնեցնել ստոյգ ժամանակագրութեան հետ՝ դարձեալ կարկատանը չի յայտնի, այլ աւելի մեծ պատառուածք կ'առաջացնէ։ Դնենք, օրինակ, որ Արշակ թագաւորել է ոչ թէ Վաղէսի, այլ Կոստանդի ժամանակ, 353ին. դնենք Արշակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ Ղեւոնդի Բիւզանդիոն գնալուց առաջ. դնենք Արշակի կարծեցեալ յաղթութիւնը Յունաց դէմ ոչ Վաղէսի մահից յետոյ, այլ 350ին (ըստ Հ. Գաթրճեանի, որ սակայն կասկածելի է համարում այս դէպքը, Տիրէ. պատմ. Բ. 497), կամ 359ին (ըստ Գարագաշեանի, որ հաւանական է համարում այս, Քն. պատմ. Գ. 74—80). դնենք Շապուհի Յունաց դէմ մղած պատերազմները վերջացած 364ին, Յովհաննսի անպաւաբ ու ստոր դաշնադրութեամբ։ Սորանից յետոյ դարձեալ պէտք է դնենք ըստ Փ.ի երեսուն եւ չորսամեայ պատերազմ Արշակի եւ Շապուհի մէջ, որ կը հասնէ մինչեւ 398 թուականը։ Այս երեսնամեայ պատերազմի տարիները չենք կարող սխալմամբ գրուած համարել, քանի որ հինգ անգամ կրկնուում են Փ.ի մէջ — երեք անգամ հեղինակի վկայութեամբ (Դ. ի, իա, ծ.), մի անգամ նախաբանների բերանով (Դ. ծա.) եւ մի անգամ Շապուհի (Դ. ծդ)։ Ուրեմն դարձեալ տեսնում ենք, որ Փ.ի պատմութիւնը վերիվայր անելով, նոցա պատմական անցքերի յաջորդականութիւնը հիմնովին խախտելով հանդերձ՝ տարպուած ենք այնու ամենայնիւ Արշակին տալ ըստ Փ.ի աւելի քան քառասուն տարի թագաւորութիւն, այն ինչ նա իսկապէս 20 տարուց էլ պակաս է թագաւորել։

Որ Փ.ի՝ Արշակի մասին տուած ժամանակագրութեան մէջ թիւրիմացութիւն չկայ, որ նա լուրջ կերպով Արշակին տալիս է քառասունից աւելի տարի երեւում է եւ ուրիշ կողմնակի տեղեկութիւններից, որ մեզ մատակարարում է այս հեղինակը։ Երեսնամեայ պատերազմների մէջ մեծ դեր է կատարել, յաճախ Պարսից զօրքին առաջնորդ է հանդիսացել Մերուժան Արծրունին։ Տեսնենք, թէ ով է այս անձն ըստ Փ.ի։ — Տիրան, Արշակի նախորդը, Հայոց մարդպետի քաջութեամբ կոտորել է տալիս ամբողջ Արծրունեաց տունը. ապառուում է միայն մի ծծկեր երեխայ, Շաւասպ, որին Մամիկոնեաները առնում փախչում են իրանց Տայոց ամրութիւնները, մեծացնում են եւ իրանց տունից կին են տալիս, որից գարձեալ սերուում է Արծրունեաց տունը (Գ. ժբ)։ Շաւասպը յետոյ վրէժ է առնում Հայոց մարդպետից, որսի ժամանակ նրան գաւազանութեամբ սպանելով (Դ. ժդ)։ Այս Շաւասպի որդին է Մերուժան, որին հեղինակը կոչում է "քեռորդի Վասակայ ի Մամիկոնեան տունէն" (Դ. ծ։ Համեմատել եւ Ե. խգ. — "Սակայն դա մեր եղբայրն է" ասում են Մամիկոնեան կանայք Մերուժանի մասին)։ Քանի՞ տարի էր հարկաւոր, որ Տիրանի ժամանակ ծծկեր Շաւարշը՝ մեծանար, ամուսնանար, որդի ունենար (Մերուժան), որ նոյնպէս մեծանար, Արշակի դէմ ապառամբէր եւ երեսնամեայ պատերազմներում վտանգաւոր հակառակորդ հանդիսանար Հայերի դէմ։ Դնենք Տիրանի թագաւորութեան սկիզբը 343ին։[1] դնենք Արծրունեաց կոտորածը հէնց նոցա թագաւորութեան առաջին տարին. այս թուի վերայ աւելացնելով գունէ 40 տարի (մինչեւ ծծկեր Շաւասպի որդին Մերուժան չափահաս դառնար), կը տեսնենք որ Մերուժանի մանկագրութիւնը երեսնամեայ պատերազմին պէտք է տեղի ունենար Գ. գարի ութսնական թուականներում։ Այս հաշիւը, ինչպէս տեսնէք՝ բոլորովին ծիրգ է ըստ Փ.ի, բայց բոլորովին սխալ ըստ ճշգրիտ պատմութեան։

Մի ուրիշ հաշիւ։ Արշակը Փառանձեմից ունենում է որդի Պապ (Դ. ժե)։ սա չափահաս դառնալով ամուսնանում է եւ ունենում է երկու որդի, Արշակ եւ Վաղարշակ (Ե. լէ)։ սորա էլ չափահաս դառնալով ամուսնանում են եւ միասին թագաւորում (Ե. իդ)։ որից յետոյ տեղի է ունենում Հայաստանի բաժանումը Յունաց եւ Պարսից մէջ։ Արդ Պապ՝ Փ.ի հաշուով՝ չէր կարող ծնած լինել 379ից վաղ (Ս. Ղեւոնդի վերագրածը Վաղէսի մահից յետոյ, Գնելի սպանութիւնը եւ Ար-

[1] Ըստ Ա. Գարագաշեանի, Գ. ն։ — Աւելի կանուխ դնել կարելի չէ։

digitised by A.R.A.R.@

չակի ամուսնութիւնը Փառանձեմի հետ), ոչ երկու որդի ունենալ առաջ քան 395 թ. իսկ ասցա ամուսնանալը եւ թագաւորելը կարող էր պատահել ոչ վաղ քան Ե. դարի սկզբներում։ Այն ինչ՝ համաձայն տոյգ պատմութեան, Պապ արքէն ապրած էր 374ին, իսկ Հայաստանի բաժանումն եղաւ 384ին։

Այստեղ էլ աշխատենք ուղղել Փ.ի ժամանակագրական անտեղութիւնները եւ համաձայնեցնենք արտաքին տոյգ պատմութեան հետ, ենթադրելով. Արշակի թագաւորելը 353ին եւ հենց նոյն թուին նորա ամուսնութիւնը Փառանձեմի հետ. ուրեմն Պապ պէտք է ծնած լիներ ոչ վաղ քան 354ին։ Արդ սա թագաւորում է 368ին, այսինքն 14 տարեկան, եւ սպանուում է 374ին, այսինքն 20 տարեկան։ Նորա մեծ որդին, Արշակ, որ ծնած պէտք է լիներ ոչ վաղ քան 370ին (իւր հօր գնէ 16 տարեկան հասակում), եւ փոքրը, Վաղարշակ, որ ծնած պէտք է լիներ ամենակնտնիք 371ին՝ ամուսնանում են, որից յետոյ թագաւորում են 379 թուին, այսինքն ամուսնանում են 7—8 տարեկան հասակում եւ թագաւորում են 8—9 տարեկան։ Այս հաշուի անտեղութիւնն ինքն ըստ ինքեան՝ շատ աչքի է ընկնում, մանաւանդ երբ յիշենք, որ Պապ մի քանի մեծամեծ պատերազմներ է մղել Պարսիկների դէմ, բազմաթիւ ապստամբութիւններ նուաճել եւ նորանոր "բարեկարգութիւններ" մտցրել Հայաստանում, ներսէս Մեծին թուականից յետոյ, 14—19 տարեկան խակ հասակում. որ Պապից յետոյ ըստ Փ.ի թագաւորել է Վարազդատ, որին հալածելուց յետոյ Մանուել հաշտութիւն է անում Պարսիկների հետ, ապա մի քանի կռիւ է մղում նոցա դէմ, յետոյ եօթը տարի խաղաղութեամբ կառավարում է երկիրը, մինչեւ Արշակին ու Վաղարշակին թագաւորելը։

Տեսնում ենք ուրեմն, որ Փ.ի ժամանակագրութիւնը լիքն է սխալներով։ Ժամանակակից պատմագիրը չէր կարող Դ. դարի 50—60ական թուականներում ապրող թագաւորին մի կողմից կապել Ներսէհի հետ (Գ. դար) եւ միւս կողմից նորա թագաւորութիւնը հայտնել մինչեւ Ե. դարի 20ական թուականները. չէր կարող նորան տալ քառասունից աւելի տարի թագաւորութիւն, մինչդեռ նա թագաւորել է 15—19 տարի. չէր կարող վերջապէս այնպիսի պատմական-ժամանակագրական տեղեկութիւններ եւ յաջորդականութիւններ հաղորդել, որոնք յայտնապէս հակառակ են տոյգ պատմութեան։ Այս անտեղութիւնները վարագուրելու համար եղած փաստաբանութիւնները կամայական եւ բռնի են, ուստի եւ անգօր։[1]

Միակ բանաւոր բացատրութիւնն այս է, որ հեղինակը ժամանակակից չէ իւր պատմած անցքերին, այլ աւանդութիւններից ու վէպերից է գրում՝ ինչ որ գրում է։

Փ.ի պատմութիւնը ջնջենալով ժամանակակից գրուածքի առաջին յատկութիւնը — ժամանակագրական եւ անցքերի յաջորդականութեան ստուգութիւն՝ ընդհակառակն ունի այն բոլոր հանգամանքները, որոնք յատուկ են ոչ-ժամանակակից գրուածքներին, այսինքն հրաշքների կուտակութիւն, աւանդութիւններ, առասպելներ, չափազանցութիւններ։ Գիրքը ծայրէ ծայր լի է այս տարրերով, այնպէս որ օրինակներ բերելը աւելորդ աշխատութիւն է։ Եթէ մեր յիշողութեան միջով անցկացնենք այս պատմութեան նկարագրած գլխաւոր գործող անձնաւորութիւնները, — Վրթանէս, Ցուսիկ, Ներսէս, Դանիէլ, Խադ, Տիրան, Արշակ, Պապ, Վասակ, Մուշեղ, Մանուէլ, Մերուժան, — կը տեսնենք, որ սոցանից ամէն մէկը զարդարուած է վերոյիշեալ հրաշային եւ վիպական տարրերով, որը շատ, որը սակաւ չափով, ուրեմն եւ ոչ մէկը ճշգրիտ պատմական տիպ չէ ներկայացնում։ Նոյն իսկ բուն պատմական անցքերը Փ.ի մէջ մեծ մասամբ կրում են վիպական-դիւցազներգական գոյն եւ տարտնով մատնում են իրանց աղբիւրը։ Եւ յիրաւի, կարող էր ժամանակակից հեղինակը գրել Արշակի այն երեսնամեայ պատերազմների պատմութիւնը, որոնց մէջ քսանից աւելի անգամ Պարսկաստանից ահագին բանակներ են գալիս Հայոց վերայ, երբեմն 4—5 միլիոն բազմութեամբ, եւ Վասակ զօրավարն ամէն անգամ բոլորին կոտորում է այնպէս, որ նոցանից ոչ մին չէ մնում, "բայց միայն չարագործն Մերուժանն միակ ճաղպերեալ" փախչում է։ Այս կախարդ Մերուժանը 17 անգամ մենակ փախչում ազատում է ընդհանուր կոտորածից. ի վերջոյ մոտ 30 միլիոն պարսիկ կոտորելուց յետոյ Արշակ... անձնասուր է լինում Շապուհին։ Կարելի՞ է արդեօք ենթադրել, որ ժամանակակից հեղինակն ընդունակ լինէր հաւատալու եւ պատմելու, թէ Դանիէլ եպիսկոպոսը կօշկով քալելով անցնում էր ջրերի վերայով. թանձր ձիւների միջով ճանապարհորդելիս՝ ձիւնը ցամքում՝ սեւ հող էր դառնում. հետեւ տեղ ուղեւորուելիս՝ փայլակի նման թռչելով յանկարծակի ուրան տեղն էր լինում. մեռելներ էր յարուցանում, եւ դեռ աւելի մեծ հրաշքներ էր գործում։ Այսպիսի հրաշքներ սուրբ անձերի մասին, առասպելական քաջութիւններ ազգային հերոսների մասին կարող են սուտ ծուռ եւ ստեղծուում են. բայց սրա համար հարկաւոր է ժամանակ, սերունդների յաջորդութիւն, որոնք միմեանցից աւանդաբար առնելով՝ հետզհետէ զարդարէին նախնեաց աւանդած պարզ գիպուածները։ Գերբնական երեւոյթների, առասպելների եւ չափազանցութիւնների ներկայութիւնը որեւէ պատմական գրուածքում՝ մատնում է նորա յետնագոյն ժամանակի գործ լինելը եւ նորա աղբիւրները — աւանդութիւն եւ վէպեր։

Հարկաւոր էր առանձին ուսումնասիրութիւն՝ որոշելու համար բովանդակութիւնն ու

1 Օրինակ, Ա. Գարագաշեան Արշակի երեսունեւչորսամեայ պատերազմները Ղազարի հետ՝ հաշուում է "ի մանչութենէն Ցրդասայդ (Քնն. պատմ. Գ., 104)։ Հակառակ հեղինակի քանիցս անգամ կրկնած բացայայտ վկայութեան, թէ այդքան տարի Արշակն է մղել պատերազմ։ Նոյն հեղինակը զարմանալի ազատութեամբ է վարուում Փ.ի հետ ասելով, թէ "Լոռ Բուզանդայ թագաւորելն Արշակայ եղաւ հանուութեամբ երկուց թագաւորաց, Կորդուանդայ եւ Շապուհայ (Քնն. պատմ. Գ., 27)։ այն ինչ ըստ Բուզանդայ (Գ., իա. Գ., ա) թագաւորելն Արշակայ եղաւ հանուութեամբ Վաղարշ եւ Ներսեհի։

digitised by A.R.A.R.@

ծաւալն այն վկաների եւ աւանդութիւնների, որոնց յից հիւսուած է Փ.ի պատմութիւնը։ Ներկայ յօդուածի նպատակից դուրս լինելով այսպիսի ուսումնասիրութիւն՝ հաբեւանցի միայն կը նկատենք, որ Փ.ի պատմութեան մէջ երեւում են ժողովրդական վիպասանութեան երեք առանձին գաւառներ. — ա) Հոգեւոր, բ) Աղբուեական տուն եւ գ) Մամիկոնեան տուն։ Առաջինի մէջ մտնում են Լբիանէս, Ցուսիկ, Դանիէլ եւ մանաւանդ Հայոց սիրելի Հայրապետը Մեծն Ներսէս, որի պատմութիւնն առանձնապէս զարդարուած է ուրբ Հայրերի, նոյն իսկ Ս. Գրոց անձնաւորութիւնների դիպուածներով։ Երկրորդի մէջ գլխաւոր տեղն է բռնում Արշակը, իւր ամուսնութեամբ Փառանձեմի հետ,[2] որ այնքան յիշեցնում է Աբրահէսի եւ Սարինիի վէպը, Արշակաւանի շինութեամբ եւ աւերածով, իւր յաճախակի պատերազմներով Սասանեան ահեղ զօրութեան դէմ, կայմաւորութեամբ ու ողբերգական վախճանով։ Երրորդը մեզ ներկայանում է իբրեւ Մամիկոնեան բուն տոհմային վիպասանութիւն, որտեղ գովասանութեամբ ասնդուում էին այդ նախարարութեան ծագումն ու պատմութիւնը, Մամգունից եւ Կոնակից սկսեալ մինչեւ Սամուէլ։ Այստեղ էլ գլխաւոր հերոսն է Վասակ ազարակեցը, Արշակի դայեակն ու անբաժան ընկերը նորա թագաւորութեան սկզբից մինչեւ Անյուշ բերդը, մի տիպար անվեհեր քաջութեան, հայրենասիրութեան եւ անձնանուէր սիրասիրութեան։[3] Գուցէ այս աղբիւրներից դուրս հեղինակն ունեցած լինի եւ գրաւոր պատմական աղբիւր, որ եթէ եղել է՝ չէ ունեցել էական նշանակութիւն եւ տիրապետող ոյժ գրքի ոգու, բնաւորութեան, ոճի ու ծաւալի վերայ, այլ ծառայել է իբրեւ օժանդակ երկրորդական աղբիւր իւր վկայական եւ վկայաբանական աղբիւրների պակասը լրացնելու։

Այս ազգային վիպասանութիւններն ու վկայաբանութիւններն են եղել մեր կարծիքով այն գլխաւոր աղբիւրները, որոնցից անծանօթ հեղինակը, — ինչպէս նորանից առաջ Ագաթանգեղոսի խմբագիրը եւ նորանից յետոյ քերթողահայրը, — հիւսել է իւր պատմութիւնը։ Այս տեսակէտից միայն նայելով՝ մեզ հասանելի կը դառնան Փ.ի պատմութեան ներքին եւ արտաքին բնորոշ յատկութիւնները — տարագէպ գործերը, որոնք ծիծաղելի են իսկական պատմութեան մէջ, ժամանակագրութեան բացակայութիւնը կամ անտարակուսութիւնը, անձնաւորութիւնների չիմաստութիւնը մեկը միւսի հետ, էպիզօդական, անկապ գլուխները, լեզուի ժողովրդական ոգին, ճոխ նկարագրական, բաղմաբառ բայց պարզ ոճը եւն։

Ո՞վ է այս անծանօթ հեղինակը. — չգիտենք. բայց որ նա հայ է՝ մենք տարակոյս չունինք։ Մենք արդէն յիշեցինք, թէ ինչպէս նա բարձր տիրապետներ է տալիս Հայոց թագաւորներին, ինչպէս բնական, կենդանի, ժողովրդական է նորա լեզուն, որ թարգմանական լեզուի կապանքները չէ կրում։[1] Աւելցնենք այստեղ նորա մի քանի ուրիշ յատկութիւնները, որոնք միայն հայ հեղինակը կարող էր ունենալ։ Նա չափազանց նախանձախնդիր է ազգային փառքին ու պատուին։ Հայը նորա հաւատով անպարտելի է։ Ամբողջ պատմութեան մէջ, որ լեցն է հարիւրաւոր պատերազմների յիշատակութեամբ ու նկարագիրներով՝ Հայերը ոչ մի անգամ չեն յաղթուում ճակատամարտի մէջ, այլ միշտ յաղթում են, այն էլ մեծ մասամբ թշնամու բանակն անմի անելով։ Եթէ թշնամին արշաւում է Հայաստան, կոտորածներ է անում, գերի է տանում, այդ լինում է միայն այն դէպքում՝ երբ թագաւոր չկայ, կամ նա աշխարհի ուրիշ կողմումն է գտնուում, կամ ուրիշ բանով է զբաղուած լինում. բայց ճակատ ու ճակատ կռուելիս՝ Հայերը միշտ կոտորում են տասնապատիկ ու քսանպատիկ բազմաթիւ թշնամուն։ Նորա պատմութեան մէջ գործող հայ թագաւորների վախճանը յայտնի է — Տիրան գերի է տարուում Պարսկաստան. Արշակ Անյուշ բերդումն է մեռնում. Պապ սպանուում է Ցունաց կայսեր հրամանով։ Բայց հեղինակին ազգային հպարտութիւնը թոյլ չէ տալիս ճանաչել կամ գրել, որ նոցա այս տեսակ վախճանի պատճառը նոցա տկարութիւնն է։ Ոչ. ամէն անգամ մի անակնկալի դիպուած է պատահում, որի առաջ անզօր է ամենազօրաւոր մարդն անգամ. — մէկին դաւաճանութեամբ բռնում են՝ երբ զօրքը բացակայ է լինում. միւսին Շապուհ "մեծաւ ազաչանօք եւ պատարագօք, հրովարտակօք եւ սիրով„ իւր մօտ է կանչում՝ երբ բոլոր նախարարներն էլ նորանից ձեռնթափ են եղել, երկարատեւ պատերազմներից ձանձրացած. երրորդին խարդախութեամբ սպանում են սեղանի վերայ։ Նա Հայոց զօրքը, նորա սարքն ու կարգը, հայրենասիրութիւնն ու սիրասիրութիւնը նկարագրում է զմայլմունքով։ — "Զորքս հարիւր հազար զօր կուռ վառեալք, որ ընդիրք եւ պատերազմիս էին, լի արտիւեամբ արուեստաց հաճատակութեանն. նիզակաւորք, սուսերաւորք,

---

1 Նորա ձեռնագրութեան գնալն ու վերադառնալը՝ Լուսաւորչին. ձեռնադրութեան ժամանակ աղաւնի իջնելը՝ Փերիանոսին. Հայաստանում կատարած գործերը՝ Լուսաւորչին ու Մերոպին, Վաղէսի հետ ունեցած որդու դիպուածը՝ Ս. Բասիլին. աքսորը՝ շատ հայրապետների աքսորին. Նպատակի վերայ ազօթելը՝ Մովսէս մարգարէին (Ելից, ժէ, 8—13). մահը եւ թաղումը՝ Ս. Սահակին։ Թերեւս նաեւ՝ անապատ կղզում հրաշքով կերակրելը՝ Իսրայելացոց մանանային եւ ջրին՝ անապատում. Արշակաւանի անեծքը Ցունաց մարգարէի քարոզութեան դիմաց։ — Ս. Ներսէսի վարքում Փ.ի հեղինակն էլ իւր կողմից շատ բան ունի աւելացած։

2 Մի ազգաս ակնարկութիւն Տիրիթ-Փառանձեմ վէպի գոյութեան մասին կարծես երեւում է հեղինակի այս խօսքում. "Զոր ասեն (Փառանձեմ) մայր ողբոցն, եւ Հայնարկուքն ամենայն ի Հայն ողբոցն սկսան նուագել, զիրան արփանայն Տիրթիթայ, զայն գնեն„ եւն։ գ. ժէ։

3 Մեկ թաւում է, թէ երեսնամեայ պատերազմների էպիզօդների մէջ հեղինակը պահպանել է վէպին յատուկ պատմայատութեան ձեւը, կաղապարը. — "Ապա գայր... (այսպան բիւրս)։ — Ապա եկեալք զորավարն Վասակ ... զամենայն ընդ սոր հանէին, բայց միայն Մերուժանն ... փախչէր միանէ,„

1 Մինչեւ անգամ արուեստական պանծանքներ ու բառախաղեր է պարունակում. — "Մեծապարգեւ մեծապատիւ մեծարէր„. "Զձերոյն պատին պատուական պատուականութեանն„. "Զչեռն նորա նորին նմանին չարչարեցին պան նոյն նորին իրաց„. "Ցաց ձեզ ձեռն ի ձեռն ի ձեռս ձերոյ„ — "Զանապարհ ընդ նէլիբոս. եւ մեծապես խորեաց Մերուժանն, տրտնջաց ընդ բանսն„ եւն։ (Գ. ժ, իա. Գ. ժգ. Դ. ժ. Ե. իգ)։

digitised by A.R.A.R.@

աղեղնաւորք անվրէպք, կորովիք. վաղուաւորք, ասպրաւորք, որք ոչ գիտէին դերիւիլ զանգիտելոյ յարանց յսխոյանոյ. համակ հեծելազորք զարհաւորք, պատնեշաղէնք, սաղաւարտաւորք, դրօշաւորք, կամ նշանաւորք, բաղմանձայն փողարքն„ (Դ. ի)։ "Եւ գասան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբրեւ վեթասուն հազար, ընտիրք եւ պատերազմղք, որ միամիտք եւ միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարանչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց, եւ ի վերայ աշխարհին գնել զանձինս իւրեանց մինչեւ ի մահ եւ ի վերայ աշխարհին եւ գաւառացն բնակութեան. հասանել մարանչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն սրբոց եկեղեցեաց իւրեանց, ի վերայ հաւատոյ ուխտին անուան Աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց„ (Դ. իդ)։ "Զամենայն ախոյեանսն, զոր ի ճակատուն յայն սպանանէին՝ (զօրքն Հայոց)՝ նուիրէին իւրեանց առաջի թագաւորին Արշակայ. զի զամենայն զոր սպանանէին՝ ասէին. Արշակայ թագաւորին մերոյ զոհ լինիր։ Եւ յորժամ Հայոց ազատանդն սեղոյեցացն նիզակաւորացն ուամ աբարեալ յարձակեալ զզօրն Պարսից նիզակաւորքն տուեալ ընկենուին՝ ասէին. Ա՛ Արշակ քաջ„ (Ե. ե)։ Նոյն իսկ Ղազարէ զմայլում է Հայոց զօրքի քաջութեան ու տիրապետութեան վերայ. "Յորժամ Հայոց նիզակաւորքն առաջի կարգէին — պատմում է նա իւր իշխաններին — այսպէս յարձակէին, որպէս զլեառն մի բարձր եւ կամ որպէս զաշտարակ մի հաստաբեստ, հզօր եւ անշարժ... զարմացեալ եմ ես ընդ ժողովութիւն միամտութեանն հայաստան գնդին ընդ տիրապետութեանն... երանի՛ որ Հայոց գնդին տեր իցե, այնպիսի տիրապետ եւ միաբան միամիտ զօրացն„ (Ե. ե)։ Հեղինակը անհուն սիրով սիրում է Արշակունի թագաւորներին, որոնց շարունակ կոչում է "բնակ տեարք„ աշխարհին, որոնց համար Հայերը պարտաւոր են իրանց անձը զոհել, տրիւն թափել։ Ով որ Արշակունի թագաւորի դէմ ապստամբում է կամ դաւ է լարում՝ հեղինակը բառ չէ գտնում նրան հայհոյելու։ "Վասաուշան„, "չարագործ„, "պիղծ„, "անօրէն„, "մեղաւոր„, "կախարդ„ — այս անուններով է նա կոչում Մեբուժանին։ Նա չէ կարող զսպել իւր զայրոյթը Փիսակ Սիւնու դէմ, որ իւր թագաւորի վերայ քաջութիւն արաւ. "Այր մի անարգ, որ ոչինչ պակաս քան զդեւ էր մոլորութեամբ... զայս ամենայն լուաւ Վարազ-Շապուհ ի կատաղախօս, ի շնաբերանն Փիսակայ... բանքն յուսկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն, շոգմոգն, տիրանենկն եւ տիրադրուժն, տիրասպանուն, տիրասամանչն Փիսակայ, յայն յաշխարհակոյս յառնէ անառ„ (Գ. ի)։ եւ այս այն դէպքում՝ երբ Փիսակ մատնել է մի թագաւորի՝ որին ինքը հեղինակը կոչում է անպիտան եւ անմիտ թագաւոր (Գ. ժգ, ժը)։ Այն զարհուրելի առասպելը, որ հեղինակը պատմում է իւր տեղի ունեցած Արշակի կալանաւորութեան ժամանակ (Գ. ծգ)։ ցոյց է տալիս, թէ հեղինակն ինչ կոյր հաւատ ունէր Հայոց Տոհի ու Ջրի զօրութեան, Հայ թագաւորի անպարտելիութեան վերայ իւր քնիկ երկրում։ Դրատամամի պատմութիւնը, որ բոլոր աշխարհային պատիւներից լաւ է համարում՝ մի օր միայն մխիթարել իւր բնիկ տիրոջ, բանտարկուած Արշակին, եւ նորա անձնապանութիւնից յետոյ ինքն էլ չէ ուզում այլեւս ապրել։ Վասակի, Մուշեղի եւ Մանուէլի գործերը, զորքի անձնազոհութիւնը — ահա բոլորը արտայայտում են հեղինակի հայեացքն ու իդեալը — անպայման սեր եւ հաւատարմութիւն դէպ ի Արշակունի հայ թագաւորները։

Այսպիսի մի հեղինակ, որ խորին հմտութիւն ունի հայ ժողովրդի բարքերին եւ հաւատալիքներին՝ որ Հայաստանի տեղագրութեան այնպէս ծանօթ է, ինչպէս քիչերը մեր պատմագիրներից, որ գիտցել է Հայոց ազգային պատմական վէպերն ու նոցանից օգտուել, որ ամենայն սիրով սիրում է Հայոց "բնիկ„ Արշակունիներին, Հայոց "մեծ„, "քաջարանց„ թագաւորներին, որ Հայոց զինուորական եւ ազգային պատուին այն աստիճան սիրահար է եւ նախանձախնդիր — այսպիսի հեղինակն, ասում ենք, չէ կարող լինել օտարազգի. նա հայ է եւ մարմնացում Հայոց ազգային ինքնաճանաչութեան, անպատաւութեան հանող պատասխանատուութեան, հաւատալիքներին — ամբողջ հայ ազգն։[2]

Այս հայ մատենագիրը (գուցէ մեկը Ս. Մեսրոպի աւագ աշակերտներից, որոնց անունները գրուածքները չեն յիշատակուում), Ե. դարի միջավայրում, օգտուելով գլխաւորապէս հայ անգիր ու գրաւոր աղբիւրներից՝ հիւսել է իւր ազգային պատմական վէպը. այնպիսի լեզուով՝ որի մէջ ցոլանում է ժողովրդական-վիպական ոգին։ Բայց ժամանակի սովորութեան համաձայն, աւելի գրքի յաջողութիւնը դիտելով՝ ծածկել է իւր անունը, եւ իւր գրուածքը վերագրել է այնպիսի մարդու՝ որի անունը կարող էր գրականութեան ասպարէզում իւր պատմութեան հաւատարմութեան։ Այսպիսի անձ է եղել հեղինակի կարծիքով՝ ծերունի Հռոմ Փաւստոս եպիսկոպոսը, Ս. Ներսէսին ձեռնադրողը եւ նորա գործակիցը, Դ. դարի դէպքերին ժամանակակիցը, որին եւ դիտմամբ կոչում է "ժամանակագիր մեծ պատմագիր„, "ժամանակագիր Յունաց„, իւր անձն ու ազգութիւնը վարագուրելու եւ իւր պատմութեան յարգը բարձրացնելու համար։ Այսպէս է վարուել եւ հեղինակին ժամանակակից մի ուրիշ մատենագիր, թերեւս նորա ընկերներից մէկը, իւր պատմութիւնը վերագրելով Տրդատի քարտուղար Հռոմ Ագաթանգեղոսին։ Այսպիսի կեղծիք են մեր մատենագրութեան մէջ՝ նաեւ առասրի Մար-Աբասի ու Զենոբը։

Եթէ ուզում է մեր այս տեսակէտը՝ ուրեմն բանասիրութեան հերթական խնդիրը պէտք է լինի՝ ուսումնասիրել Փ. ի պատմութեան աղբիւրները, գրաւոր եւ անգիր, սահմանել անգիր առան-

---

1 Դ. ի, ծգ. Ե. իբ, իե, լզ, խգ. Զ. ը, Թ։

2 Գեղեցիկ է բնորոշել այս հայն Հ. Գաթիրճեան. "Գուն հայ Հոգեն բռնած, լուրջ հայ երկիրը թաւ ա. քլաս չափած, ամէն մէկ տողին մէջ իր հայրենակցաց գաղափարաց գունով ներկած մարդ„ կոչելով հեղինակին։ "Հանդ. ամս.„ 1889, Գ. եր. 41։

digitised by A.R.A.R.@

գուրթիւնների ու վէպերի գաւառները գրքի մէջ, որոշել Հայոց այս կրօնական-աշխարհական Շահնամէի մէջ վիպականը պատմականից, առասպելականը իրականից, եւ այնուհետեւ միայն օգտուել նորանից՝ պատմական եւ ազգագրական աշխատութիւնների մէջ։ Իսկ առանց այսպիսի նախապատրաստական ուսումնասիրութեան Փ. ից իբրեւ աղբիւր պատմութիւնից օգտուելը վաղաժամ է եւ սխալ եզրակացութիւնների կը բերէ։

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՑՈՎԱԿԻՄ ԲԺԻՇԿ ՕՂՈՒԼԼՈՒԽԵԱՆ

Ընցեալ դարու բժիշկ մը, որ նշանաւոր եղած է նաեւ ներկայիս սկիզբը, Յովակիմ Օղուլլուխեան ծանօթ է մեզ իւր "Նէրի Բժշկոն" անուն գործովը, որ լոյս տեսած է Ս. Ղազարու Վանքէն՝ 1806ին։

Իւր մասին պէտք եղած տեղեկութիւնները մեծ մասամբ յղած է ինձ Վենետիկէն Մխիթարեան Միաբաններէն գիտնականն Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, որուն կը յայտնեմ հրապարակաւ իմ անկեղծ շնորհակալութիւններս։

Բժշկիս ծննդեան եւ կենաց առաջին տարիներուն վրայով գժբախտաբար չունինք վաւերական որոշ ծանօթութիւն։ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան՝ 1893 Դեկտեմբեր 14 թուականաւ ինձ ուղղած նամակին մէջ այս մասին կը գրէր սապէս.

"Յովակիմ Օղուլլուխեան՝ մերձաւոր ազգական էր մեր Հ. Ղուկաս Օղուլլուխեանի, եթէ այդ ազգակցութեամբը եղբայր հասկընանք, որ շատ հաւանական է, 1739—1745ին ծնած ըլլալու է, եւ քաղաքաւ Ցրապիզոնեցի, վասն զի յիշեալ Հ. Ղուկան 1742ին ծնած է այն քաղաքի մէջ. հետեւաբար մեր բժիշկն ալ, եթէ երկեց եղբայր համարինք, անկէ մէկէն երեք տարի յառաջ պէտք է որ ըլլայ, իսկ եթէ կրտսեր՝ այնքան տարի եաքը։"

Հ. Բարսղի ենթադրութիւնն հեռի չէ ճշմարտութենէ։ Նէրի Բժշկոնէն կ'իմանանք,[1] որ 1806ին Յովակիմ Օղուլլուխեան արդէն բաւական ատենաւոր բժիշկ մէն էր, տեր երկարամեայ փորձառութեան, որուն արդիւնքը կը գրէ իւր Երկասիրութեան մէջ։ Եթէ ընդունինք որ 1806ին էր գոնէ 30—32 տարեան բժիշկ, բժշկութեան սկսած կ'ըլլայ 1771—1773 թուականներուն. դժուար չէ այն ատեն ըսել, որ եթէ բժիշկ ընդունուած տարին զինքը 24 կամ 25 տարու համարինք, ծնած կ'ըլլայ 1746—1749 թուականներուն։

Մեր այս ենթադրութիւնը կը հաստատի նաեւ հետեւեալ կերպով։ Հ. Բարսեղ Վ. իւր նամակին մէջ կը յաբէր, որ Ս. Ղազարու մատենադարանին մէջ կը գտնուի, Նէրի Բժշկոնին լատիներէն բնագիրը, գրուած նոյն իսկ Օղուլլուխեան բժիշկէն՝ „Materia Medica" վերնագրով, որուն վերջը կը ծանուցանէ՝ թէ յամ 1785 արդէն տարբերած է եղեր անոր լրբարդրոնիոնը։ 1805ին, այսինքն 20 տարի յետոյ, Յովակիմ Օղուլլուխեան իւր աշխատութեան հայերէնը Վենետիկ կը յղէ առ Գեր. Ստեփանոս Ագոնց Աբբահայրն, գրելով նաեւ իտալերէն նամակ մը զոր պիտի կարդանք քիչ մը վարը։

1785էն երկու տարի յառաջ՝ 1783ին, Յովակիմ բժիշկ աւարտած ունի եղեր ուրիշ գործ մէն ալ „Pathologia" վերնագրով, երկհատոր լատիներէն, որ կը գտնուի այժմ Ս. Ղազարու մատենադարանը, ինչպէս կը զեկուցանէ Հ. Սարգիսեան։

Արդ՝ եթէ ընդունինք որ 1783ին կամ 1785ին Օղուլլուխեան էր գոնէ 10 կամ 12 տարեան բժիշկ, որ անհաւանական չէ, քանզի երկհատոր ընդարձակ Աէրոբոնոմիոն մը յօրինելու համար բաւական փորձառութեան տեր բժիշկ մ'ըլլալու է, եւ էր անշուշտ, ինչպէս կը հաստատեն՝ Նէրի Բժշկոնին մէջ տեղ տեղ կարդացուած "այլ՝ փորոտան ալիւռանէս," "այլ՝ փորիներս- էրյնէս" խօսքերն եւ շատ մը զգուշաւոր խրատները,[1] որ աւելի փորձառու հին բժշկի մը վայել են, քան նորահաս իակ բժշկի, բժիշկ ընդունուած կ'ըլլայ նա 1771—1773ին, ուստի եւ ծնած՝ ինչպէս ըսինք՝ 1746—1749 թուականներուն, եւ այս թուականները շատ քիչ կը տարբերին Հ. Բարսղի գտած թուականներէն։

Ընցեալ դարու գրեթէ կէսին ուրեմն ծնած է Յովակիմ Օղուլլուխեան, քիչ յետոյ Շահեան Պոլսոյ բժշկէն, որ ծնած է 1744 թուականին Դեկտեմբերի 25ին։[2]

Իւր տարրական կրթութիւնը հարկաւ իւր հայրենիքին՝ Ցրապիզոնի մէջ առաւ, յետոյ

[1] Յեսս Նէրի Բժշկոն, Վենետիկ 1806, էջ 4 եւ 186։

[1] Յեսս Նէրի Բժշկոն, էջ 4, 155, 190։
[2] Յեսս Հանդէս ամսօրեայ, Օդեսսա 1893, էջ 248 եւ 251։

digitised by A.R.A.R.@